

ՄԱՅՔ ՓԵՆՍ

Նահանգապետ Մայք Փենսը Բնդիանա նահանգից է, ունի փորձառություն իրավունքի, փոքր բիզնեսի ու քաղաքականության ոլորտներում: 2012թ. նա ընտրվել է Բնդիանայի նահանգապետ և ստանձնել 50-րդ նահանգապետի պաշտոնը 2013թ. հունվարի 14-ին:

Նահանգապետ Փենսը ձգտում է առաջ տանել Բնդիանան հաջողության ճանապարհով՝ իր ջանքերն ուղղելով ֆինանսաբյուջետային պատասխանատվությանը, տնտեսական զարգացմանը և ինդիանացի ամեն մի երեխայի համար կրթական հնարավորությունների ապահովմանը:

2013թ. պաշտոնը ստանձնելուց հետո Մ. Փենսը կարողացել է նահանգի պատմության մեջ հարկային ամենամեծ կրճատումներն ապահովել՝ բիզնեսի անհատական գույքահարկի և կորպորատիվ եկամտահարկի մասով, ինչով մեծացել է նահանգի մրցունակությունը ներդրումների ներգրավման հարցում, ինչն էլ հանգեցնում է ինդիանացիների համար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմանը: Նրա օրոք ստորագրվել է կրթական հնարավորությունների մեծացման մասին օրենք, որով ֆինանսավորում է ապահովվել նախակրթության համար և բոլոր ավագ դպրոցներում մասնագիտական ու տեխնիկական կրթությունը դարձել է գերակա ուղղություն՝ հմտությունների ու կարողությունների առկա բացերը փակելու նպատակով: Եվ քանի որ նահանգը ամերիկյան քառուղիներում է և ճանապարհները այստեղ նշանակում են աշխատատեղեր, ուստի նահանգը 800 միլիոն ֆինանսավորում է տրամադրել Բնդիանայում ճանապարհաշինական ու կամրջաշինական աշխատանքների համար:

Նահանգապետն աշխատել է Բնդիանայի ընդհանուր ժողովի հետ՝ ձևավորելու հավասարակշռված բյուջե, որը մի կողմից ապահովում է կայուն պահուստներ նահանգի համար, իսկ մյուս կողմից շարունակում է հավելուրդ ապահովել: Ֆինանսաբյուջետային այս կարգապահության շնորհիվ Բնդիանան պահպանում է ներդրումային AAA վարկանիշ և աշխարհով մեկ վայելում է մի այնպիսի վայրի համբավ, որտեղ տնտեսավարման համար ստեղծված են լավագույն պայմանները:

Նահանգապետ Փենսը տնօրինում է նահանգային 28.000 աշխատողներից կազմված թիւը և 30,6 միլիարդ դոլար կազմող նահանգային բյուջեն: Որպես նահանգային իշխանության գործադիր ճյուղի ղեկավար նա վերահսկում է գործադիրի պարտականությունների կատարումը, աշխատում օրենսդրի՝ Բնդիանայի ընդհանուր ժողովի հետ օրենքների առաջ քաշման, վերանայման հարցերի շուրջ: Նա նաև Բնդիանայի ազգային գվարդիայի գերագույն գլխավոր հրամանատարն է:

Մինչ նահանգապետ ընտրվելը Մ. Փենսը կոնգրեսում ներկայացնում էր Բնդիանա նահանգի 6-րդ ընտրատարածքը:

Առաջին անգամ նա կոնգրեսական ընտրվեց 2000թ., իսկ 2010թ. վերընտրվեց 6-րդ անգամ և այդ տարիների ընթացքում, ինդիանացու իր սրտացավությամբ, շատ արագ աչքի ընկավ ընտրազանգվածի առաջ իր պատասխանատու գործելակերպով, ֆինանսական պատասխանատվության, տնտեսական աճի խթանման նախաձեռնություններով: Այս մշակույթն ու արժեքները նա իր հետ տեղափոխեց նաև նահանգային կառավարման մակարդակ:

Մ. Փենսի ձեռքբերումները օրենսդրական տիրույթում և առաջատար դիրքը հանգեցրին նրան, որ իր գործընկերների կողմից նա միաձայն ընտրվեց Ներկայացուցիչների պալատի հանրապետական խմբակցության նախագահ և Ներկայացուցիչների պալատի հանրապետական հետազոտական կոմիտեի նախագահ:

Որպես զինված ուժերի աջակից Մ. Փենսի համար առաջնահերթ է եղել վետերանների շրջանում գործազրկության նվազեցումը, իսկ կոնգրեսական լինելու տարիներին նա, ռազմական գործողություններ սկսվելուց

հետո, ամեն տարի այցելել է ինդիանացի զինվորներին Իրաքում և/կամ Աֆղանստանում:

Փենսը ծնվել և հասակ է առել Ինդիանա նահանգի Կոլումբոս քաղաքում, սովորել Կոլումբոս Նորթ ավագ դպրոցում, ապա 1981թ. ավարտել է Հանովերի քոլեջը և ուսումը շարունակել Ինդիանայի համալսարանի իրավագիտության դպրոցում, որտեղ էլ ստացել է իրավագիտության դոկտորի կոչում 1986թ.:

Նահանգապետ Փենսն ու նահանգի առաջին տիկին Քերին Փենսն ամուսնացած են 1985թ.-ից և ունեն երեք չափահաս երեխա՝ Մայքլը, Շառլոտը և Օդրին: